

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ռ Թ Յ ՈՒ Ն N 440

Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձանց ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը տեղեկացնում է ժամանակավոր թափուր պաշտոնի վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի
աշխատակազմի գլխավոր մասնագետ-իրավաբանի
(ծածկագիրը՝ 2.3-4)

- 1) Կատարում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով.
- 2) իր կողմից մշակված իրավական ակտերի նախագծերի, ծրագրային փաստաթղթերի և նյութերի փորձաքննության ուղարկելու անհրաժեշտության մասին առաջարկություններ է ներկայացնում քարտուղարին.
- 3) անհրաժեշտության դեպքում՝ քարտուղարի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ, մասնակցում է Ստեփանավանի համայնքապետարանի և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին, համայնքի շահերի պաշտպանությամբ հանդես է գալիս դատական նիստերում, աջակցում է խնամակալության հանձնաժողովի գործերին, վարում է վարչական իրավախախտումների հանձնաժողովի փաստաթղթային, իրավական գործընթացը.
- 4) անհրաժեշտության դեպքում, իր լիազորությունների սահմաններում, նախապատրաստում և աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.
- 5) իրականացնում է քաղաքացիների դիմում-բողոքների սահմանված կարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում է աշխատակազմի քարտուղարին, վերահսկում է փաստաթղթերի, որոշումների, կարգադրությունների օրենքների համապատասխանությունը, մասնակցում է պաշտպանելով համայնքի շահերը, մասնակցում է խնամակալության, հոգաբարձության մարմինների գործառույթները, արձուրդների կազմակերպմանը.
- 6) ստորագրում է իր կողմից պատրաստվող փաստաթղթերը.
- 7) պատրաստում է ծանուցումներ հողի հարկի, գույքահարկի, աղբահանության վճարների ապառք ունեցող ֆիզիկական և իրավաբանական անձանց վերաբերյալ
- 8) կազմում է համայնքի ղեկավարի որոշման նախագծեր, հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարները գանձելու մասին
- 9) պատրաստում է գրություններ հարկադիր կատարման վերաբերյալ
- 10) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ
- 11) մասնակցում է համայնքի զարգացման հնգամյա ծրագրի կազմման աշխատանքներին
- 12) մասնակցում է համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի (ՀԿՏՀ) շահագործման աշխատանքներին

Գլխավոր մասնագետն ունի օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված պարտականություններ:

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

-ունի բարձրագույն իրավաբանական կրթություն, համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ: Մինչև 2018 թվականի հունվարի 1-ը համայնքային ծառայության, պետական և (կամ) համայնքային կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ:

-ունի՝ ՀՀ Սահմանադրության, Համայնքային ծառայության մասին, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքների, Քաղաքացիական օրենսգրքի, ՀՀ աշխատանքային, հողային, վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությունների, Խնամակալության, հոգաբարձության մարմինների կանոնադրության մասին, Դատական ակտերի հարկադիր կատարման մասին, Քաղաքացիների դիմումներին ու առաջարկություններին ընթացք տալու կարգի մասին ՀՀ Օրենքների, համայնքի աշխատակազմի կանոնադրության, մասնագիտական և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

-տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվության.

-ունի համակարգչով և ժամանակակից տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

-տիրապետում է ռուսերենին (ազատ) և մեկ այլ օտար լեզվի (կարդում, կարողանում է բացատրվել):

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 2020 թվականի դեկտեմբերի 30-ը ժամը 10:00:

Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձինք դիմումներ կարող են ներկայացնել e-request.am էլեկտրոնային հասցեին: Տեղեկություններ ստանալու համար կարող եք զանգահարել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն հեռ. 010515133:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների
նախարարություն